

ՎԱՐԴԱՎԱՌԻ ՏՈՆԸ

Հնադուրն ժամանակաշրջանում հայերը հեթանոս էին և պաշտում էին շատ աստվածներ: Ինչպես ուրիշ ժողովուրդներ, հայերն էլ իրենց աստվածներին վերադրում էին մարդկային հատկություններ: Այսպես նրանք Արամազդին համարում էին աշխարհի ստեղծող և պահապան, նաև մարդկության և բնության խնամակալ հայր: Նրանից փոքր և նրան ենթակա էին Անահիտը՝ ծննդաբերության և երկրի պտղաբերության հովանավոր աստվածուհին, Վահագն անպարտելի քաջության օժտված աստվածորդին, Աստղիկը՝ գեղեցկության դիցուհին, Տիր Արամազդի դստեր քարտուղարը կամ գիտությունների, իմաստության աստվածը և այլն:

Այդ ժամանակաշրջանում, ուրեմն հայ ժողովուրդը պաշտամունքի առարկա է դարձրել տիեզերաստեղծ ուժը, քաջությանը, երկրի և մարդկանց պտղաբերությանը, գեղեցկությանը, գիտությանը և այլն:

Բնության երևույթները պատկերելով որպես գերբնական էակների կամքի և ուժի արտահայտություն՝ ժողովուրդը պաշտել, երկրպագել է նրանց, զգալով երկյուղ կամ սեր դեպի այդ գերբնական էակները, որոնց ստեղծել է իր երևակայության ուժով: Ահավոր աստվածների արտեր սիրաշահել են ծնրադրության մեջ, զոհեր ունենալ, նույնիսկ մարդազոհության մեջ, իսկ Բարդու համար օգտակար, անուցող, դուրսընդ աստվածներին մատուցվել են հարձանք սիրախառն պաշտամունքով և հանդեսներով:

Այսպես կրակը և ջուրը, նրանց կենսաձեռք օգտակարությունը սիրո և պաշտա-

մունքի առարկա են դառել հնադարյան հայի համար և ճանաչվել աստվածային, նրանց մասին հորինվել են առասպելներ, դրույցներ, պատմվածքներ, որոնց զուգակցել են ծեսեր, արարողություններ: Նույնպիսի առասպելներ հորինվել ու պատմվել են հայկական հսկա լեռների՝ Մասիսի, Արագածի մասին, Գեղամա լճի, Բղնունեաց ծովի մասին և այլն:

Դարերի ընթացքում պաշտամունքի առարկա ճանաչվեցին իրենց օգտակարության մեջ կրակը, որի կապակցության մեջ կրակապաշտությունը առաջ եկավ և ծախվում կրոն մնաց հայերի, պարսիկների, քանանացիների և ուրիշների մեջ:

Կրակապաշտության հին հետքերը Հայոց մեջ մնացին ընդմիշտ և քրիստոնեական ծեսերի մեջը մտնելով քրիստոնեացան ու պահպանեցին իրենց դրությունը և պաշտամունքը ցայսօր, (տրեղեղը Տյառնընդառաջի տոնին, Վրժիթածնի զանգակատան առաջ, Հայոց դյուղերի բոլոր տներին կրտուրների վրա վառվող խարույկները, դոմերի երգիքներից ցանվող կրակի կայծերը, եկեղեցիներում առատորեն մոմեր վառելու սովորությունը և այլն և այլն):

Մեր խոսքը «Քոյր կրակի» պաշտամունքի մասին չէ այստեղ, այլ նրա «Ջուր եղբոր» մասին է, ջուր աստծու մասին, որ քրիստոնեական եկեղեցին մտել ու դարերով տոնվում է «Վարդապետի տոն» անունով:

Կրակի չափ էլ ասելի անհրաժեշտ էր հնադուրն մարդկության (ինչպես և բոլոր ժամանակների մարդկության) համար ջուրը: Ջրի կարևորությունն է աստուածացրել և պաշտելի դարձրել ջուրը: Ծովերը,

դեպքերը, աղբյուրները բոլոր ազգերի մեջ պաշտվել են որպես աստուածներ և տոնվել մեծ հանդիսավորությամբ:

Մեր արդի քրիստոնեական Վարդավառի տոնը Քրիստոսի պայծառակերպության տոնն է, որի մեջ պահպանվել են ջրի պաշտամունքի տարրերը: Բայց այդ տոնը քրիստոնեության ծագման հետ կապված չէ, այլ հայոց հեթանոսական ժամանակի ազգային տոնն է, որ հետագայում, քրիստոնեական դարում Քրիստոսի պայծառակերպության հետ է կապվել և դարձել քրիստոնեական տոն:

Վարդավառը հին հեթանոս հայոց մեծ տոներից մեկն է և կապված է ջրհեղեղի, Նոյ Նահապետի տապալի առասպելների հետ, ջրհեղեղից ազատված Նախահայրերի և նորոգված կյանքի հետ: Քրիստոնեական Վարդավառի տոնը հնադարյան հայության նախաարդի տոնն է:

Ինչպես պատմում է առասպելաբանությունը՝ Նոյ Նահապետը ջրհեղեղից ազատվելու համար և իր հետ իր որդիքն ու բոլոր կենդանիներից մեկ մեկ զույգ ազատելու համար, նախ նստեց ու ջրհեղեղից ազատեց թե մարդկանց և թե կենդանիներին և նոր մարդկության ու կենդանական կյանքի սկիզբը դրեց այդ օրը և առաջին ամիսը նա անվանեց «Նավասարդ»: Երբ ջրերը ցամաքեցին և Նոյը նախից իջավ բնակություն հաստատեց Նախիջիվանում, այսինքն իջման առաջին տեղը, նա կենդանիներ գտեց և այդ օրվանից հայոց տարվա առաջին ամիսը կոչվեց Նավասարդ նորոգված աշխարհի առաջին ամիս:

Ջրհեղեղի և նրանից ազատվելու հիշատակը հայիտենապես անմոռաց պահելու համար Նոյը պատվիրում է իր որդիներին այդ ազատության մեծ օրը իրար վրա ջուր ցանել:

Երբ քրիստոնեությունը տարածվեց հայերի մեջ հեթանոսական տոները տեղի տվին քրիստոնեականին: Հեթանոսական տոներից շատերը իրենց ձևերով ու արարողություններով անխախտորեն մտան քրիստոնեական տոների մեջ, միայն կապվելով

Քրիստոսի և քրիստոնեության անվան հետ: Հեթանոսական Վարդավառի տոնը կապվեց Քրիստոսի պայծառակերպության տոնի հետ ու մնաց ժողովրդի մեջ հին անուշով «Վարդավառ» ու տոնվեց եկեղեցում, իսկ եկեղեցուց դուրս անխախտ պահվեցին ու տոնվեցին ցայսօր հին Վարդավառի բուն ժողովրդական ծեսերն ու խաղերը տներում, փողոցներում, դեռահայրերի ափերին, աղբյուրների մոտ ուրախ խաղերով, իրար վրա ջուր ցանելով և այլն:

Քրիստոնեության տարածիչները Հայաստանում արմատախիլ չարին հայ ժողովրդի մեջ դարերով սրբագործված հեթանոսական սովորությունները: Քրիստոնեության քարոզիչները Հայաստանում քրիստոնեության մեծագույն գաղափարները հաջողությամբ տարածելու համար ժողովրդի հին կրոնական-աղբյուրն ավանդություններին չդիմացան, այլ պահպանեցին և նրանց սրու չափով քրիստոնեական բնույթ տվին:

Այդ ավանդական հին սովորությամբ Վարդավառի տոնին աղախնի թոցները մնացել է ու պահպանվել ժողովրդի մեջ:

Այդ ավանդական սովորությունները հիշեցնում է Նոյան սղախին, որ արձակվեց առաքանից:

Ուրիշ ազգերի մեջ Վարդավառի տոնը կոչվում է նաև «Աղախնիների տոն»: Այդ օրերը աղախնիներ են թոցնում նաև հայերը, օրհնակ Կ. Պոլսում և այլ գաղափարում, որ հիշեցնում է Նոյի թոցած աղախումը:

Ինչպես բոլոր ազգերի, նույնպես և հայ ժողովրդի մեջ ջուրը համարվել է սրբիչ, մաքրիչ, առողջացուցիչ և դորացուցիչ պաշտամունքի առարկա: Զուրը ցանվում էր աստվածներին մատուցվող նվերների, ինչպես և մարդկանց վրա: Զրի հետ մաքված այդ հեթանոսական սովորությունը պահպանվել է մեր ժողովրդի մեջ և կապվել քրիստոնեական Վարդավառի տոնի հետ: Վարդավառի օրը մինչև այսօր ջուր է ցողվում: Իսկ դուրսը իրար վրա ջուր են ցանում մեծ թե փոքր, տղա ու աղջիկ: Զուր ցողելիս և դուրսը իրար վրա ջուր

ցանկելիս դործադրվել է մի հատուկ անոթ, որ կոչվում է «մշտուկ», դա նշանակում է ջուր ցանող դործիք, ցանիչ:

Վարդավառին ու էջմիածնի պատարագի սեղանը, պատանակները զարդարվում էին ծաղիկներով, կանաչներով, բույսերով, որոնք աճել են հնում պաշտելի սուրբ ջրով:

Վարդավառի տոներ հիշեցնում է այն օրը, երբ Հայոց Տրդատ Թագավորը հրամայում է սուրբ Գրիգոր Լուսավորչին «պաակա և Թաւ ոստս ծառոց նուէրս տարցէ Բագնին անհատական պատկերին»:

Քրիստոնեական մկրտությունը սրբացրել է հին ջրապաշտության սովորությունը, ջրի պաշտամունքը: Քրիստոսի ծննդյան և մկրտության տոնին, որ կոչվում է նաև ջրօրհնյաց տոն, քրիստոնեական եկեղեցու հոգևորականությունը թափորով դետափն է դնում ժողովրդի հոծ բազմության հետ միասին «խաչը ջուրը դցելու», երբ հանդեսի ժամանակ կրոնապետը ոսկեղեն աղափնու կտուցից սուրբ մյուռտնն է լցնում դետի մեջ, այդ վայրկյանին երիտասարդները մերկանալով նետվում են մյուռտնաձե ջրի մեջ լողանալու: Ջրի և աղափնիների հետ կապված այդ բոլոր ծեսերը հեթանոսական ջրապաշտությունից են ստացել իրենց ծագումը: Քրիստոնեական դադափարների արտահայտություն, քրիստոնեական իմաստ են ստացել ու պաշտամունք դարձել:

Հնադարյան ջուր աստծու աղբյուրներն էլ տեղ տեղ սրբավայր են մնացել մինչև այսօր, ուխտատեղ դարձել ժողովրդի համար: Հայաստանում գրեթե գալստ չըկա, որ չունենա իր սուրբ աղբյուրը, իր «Լուսաղբյուրը», ինչպես կոչվում են նրանք, ուր համատացյալները աղոթելու, մոժ վառելու են գնում, նրա ջրով իրենց ցավազար աչքերը լվանում, իրենց փարչերը «Լուսաղբյուրի» ջրով լցնելով տուն վերադառնում:

Հայոց եկեղեցու ավանդության սուրբ Հովհաննիսյան կույսերը իրենց փախուսյան ճանապարհին մի ժամանակ դադար են առել Սողոմի սարի ստորոտում (Բերկրի դավառ): Այդ դավառի ժողովուրդը համատարած աչքացավով էր ստուգում: Աչքացավով բռնվում են նաև կույսերը, որոնց աղոթքով երկու աղբյուր է բղխում այդ տեղից, այդ «Լուսաղբյուրների» հրաշագործ ջրով բժշկվում են բոլոր ուխտավորների ցավազար աչքերը:

Ահհետաքրքիր չէ խմանալ, թե ինչու առասպելական Նոյի սահմանած հեթանոսական տոներ քրիստոնեական եկեղեցին տոնում է Քրիստոսի պայծառակերպության տոնի օրը:

Նոյի ջրհեղեղից ազատվելը տեղի է ունենում Մասիսի բարձրունքում, Քրիստոսի պայծառակերպությունն էլ տեղի է ունենում նույնպես մի բարձր սարի գլխին:

Ջրհեղեղի առասպելի մեջ Նոյը մանկամիտ մարդկությանը, կենդանական աշխարհի ներկայացուցիչ զույգերին Մասիս սարի գլուխը հանելով փրկում է, ապա ջրհեղեղից հետո իջնելով երկիր, որ ասորին, աճին, բազմանան, պաշտեն բնության բարի տարերքը, չար տարերքին դուհարերություններով սիրաչահելով, բարիներին պաշտելով, սիրով ծառայելով:

Քրիստոս բնապաշտության մոլորությունը վերացրեց իր ուսմունքը քարոզելով: Նա աստծուն տեսավ ոչ ջրի, ոչ կրակի ոչ էլ մի այլ տարերքի մեջը, այլ մարդու սրտի մեջ: «Աստուած ի ներքս ի ձեզ է», ասում է նա, կարող եք Աստծուն նմանել, երջանիկ լինել ահա երկնախոր, հրաշալի աստվածային ուսմամբ: Վարդապետությամբ, որ կոչվում է սուրբ ավետարան:

Ուրախ լեր, հոգի քրիստոնեություն, զի խաւարն մերժեցաւ եւ ախն ծագեցաւ միշտ, հանապաղ յուսատու լիցի բեզ Քրիստոս: